

# ՀԱՅ ԵՐԳԸ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ

## ԿԱՄ «ՆՈՐ ԵՐԳ»

«Քիչ մը վեր ելէք սեղանէն եւ անկողինէն»

Ծ.Նարդունի

Այո՛, սահման կամ «Քաղաւ» չկար դասականը արդիականին, հոգեւորը աշխարհիկին, ժողովրդականը հայրենասիրականին, Հինը նորին հետ շաղամ երիտասարդական այս նուազախումբին դիմաց, որ կատարողական իր մակարդակով եւ զգացողութեամբ առինքնեց իր երգացանկին նման աշխարհի հանդիսատեսներու 200-250 հոգիեաց խումբը, եկած մեծ մասով Տէսինէն, նաեւ Լիոնէն եւ շրջակայքէն, Տէսինի քաղաքապետարանի սրահը, Հայ Աւետարանական եկեղեցւոյ հրահրով, Մայիսի 5-ի երեկոյեան:

Գլխաւոր մենեդժերէի երիտասարդ Հուրիկ Աբարդեան իր դուարթ ներկայութեամբ կարծես ըլլար ծայրագ խումբին, երբ «Մեծն Սօփրան» զգլխիչ, ուժեղ, բայց քընքոյ իր ձայնը կը հոսեցնէր հեզասահ ասուի մը նման, մեծ հանոյք պատճառելով ունկնդիրներուն, որոնք բազմիցս եւ երկար, երբեմն յօտնկալս ծափահարեցին զինք եւ ընկերակցոյ (նաեւ դաշնակահար) Սեւան Գարեհան-Պալապանեանը, Հրակ Գարակէտեանը (նաեւ կիթառահար) Պատ, Նշան Պազարեանը, Կարպիս Տէյիրմէնեանը եւ Ներսէս Պալապանեանը: Հուրիկ Աբարդեան վարպետօրէն մեկնաբանեց (Քէլզեա կրնար իր երաժշտական պատրաստութեամբ եւ ձայնի որակով անմատչելի մեայ հասարակ ունկնդրին) «Երեւան-Երեւունի» (Է. Յովհաննիսեան), «Լոյսերի մէջ» (Ա. Մանգալուսեան), «Հայրենի» (Ա. Պալապանեան), «Փն», «Կուսնկ» (Ա. Հէքիմեան), «Գարձէ՛, եկէ՛՛» (Վեր. Մ. Գարակէտեան), «Հայաստան» (Ա. Սահակեան), «Գարձի՛ր Ազգս Հայ», «Անդադար պիտի երգեմ», «Յիսուս, Կեանք Անցին Տոիր», «Օրինեցէ՛ք Տէր» եւ «Փառ՛ Եմ՛ Տայիս Քնգ» երգերը:

Իսկ երբ Հուրիկ, Սեւան եւ Ներսէս չմտնալի երրեակը մեզի հրամցուց Թուզերթ Ամիրխանեանի քիչ լսուած «Երազ Իմ Երկիր»ը, (նոր մշակումովը՝ Թուզերթ Պարսեանի), հաւարարար քիչ մը վերացանք դէպի այլ ոլորտներ, փոխադրուեցանք Հայրենիք:

«Նոր Երգ» խումբը նաեւ կը յենի երիտասարդ երաժշտ-խմբավար Զաքար Քէշիշեանի վրայ, անոր անուր ծանօթ է երաժշտական-դաստիարակչական շրջանակներու, Լիբանանէն Հայաստան եւ Արցախ՝ մանկական երգչախումբերու կազմութեամբ եւ ղեկավարութեամբ, ինչպէս Շուշիի «Վարակառնով, Լիբանանի «Համազգային» Քարանկ Կանաչեան երաժշտանոցի «Կարկաչ» մանկական երգչախումբով եւ Լիբանանի պետական երաժշտանոցի չափահասներու մասնախմբական երգչախումբով: Ան սակէն ամառ եւ այն՝ աստը տարիէ ի վեր, Արցախ վերադառնալով կը մարզէ «Վարակառն», նոր թափ տալով անոր:

Զաքար նախ ծանօթացուց շուրի որպէս հարազատ հայկական շշական գործիք, ապա ներկայացուց «Էրգրումի Մարտ»ը, «Շողեր ծան»ը (Գոմիտաս-Եղիազարեան), «Քրլ-բուլի Հիտ»ը եւ «Փառնակայ»ը (Ա. Նովա-Մարիտապետեան) եւ «Հայկական Ժողովրդական Մեղեքիներու Շարունը», գաղնակի ընկերակցութեամբ Սեւան Պալապանեանի, հանոյքի պահեր պարզեւելով ունկնդիրներու, ապա

խոսք անձնով յայտնեց, որ փամփուշտին զուգահեռ, երգի զէնքը անհրաժեշտ է, որպէսզի մի՛ւս պատերազմը, մշակոյթը կենդանի պահելու համար մղուած՝ շահերը, յաղթները, որ շայիք սերունդներ հայերէնով սէր երգեն դեռ երկար տակն:

Ներսէս (կամ Վերապատուելի Պալապանեան), որ Հիմնադիրն ու ղեկավարն է 7 հոգիեաց այս երաժշտախումբին, յաջողած էր իր եւ միւս երաժիշտներուն հաւատքը արտայայտել նոր ոճով ու մեղով: Ան կ'ըսէ, որ թէեւ կը հիանայ մեր եկեղեցական շարականներուն վրայ, բայց մտահոգուած հայ երիտասարդին իմաստի եւ նորութեան փնտրումը, կ'ուզէ արդիական, թարմ ու աշխոյժ շուրջ տալով մեր երգերուն, հասնել անոր սրտին:

Ուսուցչապետ եւ թուարանագէտ Սարգիս Պալապանեան երկը, (ժողովուրդին ծանօթ Պալապան Խոճա անունով), որ Սփիւսքի վերջին հարիւրամեակի ամենէն բեղուն գործունէութիւն ծառայած տղաքին-յեզափոխական եւ հասարակական գործիչներէն է եւ որ դաստիարակած է բազմաթիւ սերունդներ՝ Այնթապի Լիզիպեան վարժարանէն Գոլէն եւ Ամերիկեան Որբանոց, ապա Հայէպի Գոլէնէն Ուսումնասիրաց եւ Կրթասիրաց վարժարաններ, իր ինքնակենսագրութեան մէջ («Կեանքիս առ՛ ու պաղ սրիւրը») կ'ըսէ. - «Ի՛նչ կ'ուզեմ կեանքէն, եթէ ոչ այն, որ մեր յետնորդները իմանան, թէ կը պատկանին ժողովուրդի մը, որ ունի Անցեալ, Մշակոյթ եւ Հաւատ»:

Այսօր, անոր արժանաւոր թոռան՝ երաժշտագէտ Ներսէս Պալապանեանի գործով քիչ մը կ'իրականանայ մեծ Տօր իզձը, մասնաւոր երբ ան կը յօտնադասէ, որ «դժուար, բայց հիմնական գործ է, խորացոյն գոնուանկութիւն պատկանող բան, պակեյ մեր յեզուն, մշակոյթը, կաւաւրը: Երբ Լրիստանէութեան պետական կրօն հոշակուելու 1700-ամեակ կը ծրագրենք տանել, ապա իմ'առ տանել աստը, անդրազատնայով եւ դատնայով Աստուծոյ, վերականգնելու մեր Լրիստանէական հաւատը, Մաշտոցի եւ Վարդանի նման յարելով Աստուածաշունչին»:

Հայերէնով երգուած, օդի բուրոյ երգերու սիրահարները, որոնցմէ շատ քիչեր ներկայ էին այդ երեկոյ, առիթ ունեցան թերեւս հաշակները նորացնելու... Երանի թէ շատեր, որոնք կարծեցեալ ծառայութիւն կը մատուցանեն Հայ երգին՝ Ա. Ասատրեանեան եւ Փ. Պաշտասիրեանեան իրենց երգերով, համեստութիւնը ունենալին երկու ժամ տրամազրելով ունկնդրել՝ տաղանդաւոր, բայց համեստ «Նոր Երգ» խումբը, որ դիտակից իր առաքելութեան, կը սփռէ գեղեցիկ երաժշտութիւն (ո՛չ աղմուկ), նշգրիտ հայ երգ (ո՛չ թրջավարի, ո՛չ ալ պորտապարի ոճով) եւ կը յուսայ աւելի՛ վե՛հ ուրախութիւն մը պատճառել լսողին, սկսնակելով, որ անոր կեանքը քիչ մը լիցուի ազգի սիրով եւ Աստուծոյ դիտակցութեամբ:

Ս. ՍԱՊՈՒՆՃԵԱՆ